
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՄՏՔԻ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայկական հարցի միջազգայնացման շուրջ 130-ամյա պատմության ուսումնասիրությունն արդիական նշանակություն ունի հատկապես հայրենական պատմագիտության համար՝ այն ճշմարտացիորեն և անկողմնակալ գնահատելու տեսակետից: Հայկական հարցի միջազգայնացման պատճառները, ընթացքը և անհաջողությունները, դրան սոված գնահատականները, տերությունների վերաբերմունքը դեպի Օսմանյան Թուրքիան, հայերի արտաքին քաղաքական կողմնորոշումները և այլն, այս ամենը բազմիցս քննարկվել են պատմական ուսումնասիրություններում ու տեղիք սովել տարակարծությունների և տարբեր մոտեցումների: Հիմնահարցի այսպիսի լայնածավալ քննարկումը պատմական յուրաքանչյուր դարաշրջանում Հայկական հարցի գիտական մեկնաբանությանը տալիս է յուրովի ուղղվածություն՝ ընդառաջելով ժամանակի առաջադրած հարցադրումներին: Խորհրդային պատմագիտությունը, հարցի ուսումնասիրության մեջ ունենալով իմացական ու ճանաչողական կարևորագույն ձեռքբերումներ, այսուհանդերձ, հարկադրված էր հաշվի առնել գաղափարական թելադրանքը՝ ծայրահեղորեն միակողմանի դարձնելով Ռուսաստանի ազատագրական առաքելությունը և եվրոպական տերությունների ու Թուրքիայի բացասական նշանակությունը օսմանահպատակ ժողովուրդների ազատագրության գործում: Խորհրդային պատմագիտության մեջ, սակավ բացառություններով, Հայկական հարցը և նրա միջազգայնացումը դիտվում են կա՛մ որպես Արևելյան հարցի մի հետին օղակը, կա՛մ էլ կտրված՝ արևմտահայության ազգային կառույցներից և օսմանիզմի քաղաքական մոտեցումներից: Մինչդեռ դրանք պետք է դիտել որոշակի կապակցվածության մեջ Հայկական հարցի միջազգայնացման և դրա հետ ունեցած առնչություններով:

Ներկայումս, երբ երբեմնի Հայկական հարցի միջազգային զարգացումները վերածվել են առհասարակ հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղության, դրա միջազգայնացման պատմության ուսումնասիրությունը ստանում է ճանաչողական արժեք՝ ամենից առաջ արդիականության տեսակետից:

Հայկական հարցի միջազգայնացման վերաբերյալ ստեղծվել է պատկառելի գրականություն, որ ընդգրկում է ժամանակի հայ հասարակական մտքի արձագանքները, վավերագրերն ու փաստագրական այլևայլ հրապարակումները, ինչպես և տարբեր լեզուներով առանձին հեղինակների աշխատությունները:

Ժամանակի հայ հասարակական մտքի գնահատումներում իր ներգործությամբ աչքի էր ընկնում «Մշակի» քարոզչությունը: Գր. Արծրունին մի հայտնի

չափով ընդառաջում էր ռուսական արտաքին քաղաքականության օրակարգ մտած խնդիրներին: Առաջնորդվելով միջազգային իրական կացությամբ՝ թուրքական լծից արևմտահայության ազատագրության գործը նա կապում էր ռուսական զենքի հաղթանակի հետ: Սակայն նա տուրք էր տալիս իր կողմնորոշումից բխող պատրանքներին, երբ Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը մեկնաբանում էր իբրև նահանգական ինքնավարություն, մինչդեռ այդպիսի ինքնավարությունը բացառվում էր ռուսական ծրագրերում: Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի անհաջողությունը Արծրունին համարեց անգլո-թուրքական գործարքի հետևանք և, մյուս կողմից, արևմտահայության հապաղումների արդյունք: Համաձայն Արծրունու տեսակետի, եվրոպական դիվանագիտությունը «մարդկային իրավունք» է շնորհում այն ազգերին, որոնք զինված պայքար են մղել Թուրքիայի դեմ, իսկ հայերը ոչինչ չստացան, որովհետև չապստամբեցին²:

Ազատագրական պայքարին շատ ավելի հետևողականորեն ապավինում էր Բաֆֆին: Հայերը արդյունքի չհասան ո՛չ Սան Ստեֆանոյում և ո՛չ էլ Բեռլինում, որովհետև «նախապատրաստված չէին ժամանակից մեծ օգուտ քաղելու», ընդգծում էր նա ազատագրական կռիվի նշանակությունը³: Բեռլինի վեհաժողովից հետո ևս Բաֆֆին աներեր մնաց ազգերի ազատագրությունը զինված պայքարով ձեռք բերելու իր հավատամքի մեջ:

Հայկական հարցի նկատմամբ տերությունների քաղաքական գծուծ հաշվարկները սպանիչ ծաղրի են արժանացել Հ. Պարոնյանի հրապարակախոսության մեջ: Մեծ երգիծարանը բացահայտել է և՛ անգլո-ռուսական հակամարտությունները, և՛ Ավստրո-Հունգարիայի նկրտումները Բալկաններում, և՛ Բիսմարկի հաշվենկատ չեզոքությունը վեհաժողովում: Բուն Հայկական հարցի միջազգայնացումը նա համարում էր ոչ թե դրսից թելադրված մի իրողություն, այլ հայության տառապանքների ու բողոքի արդյունք, որի առթիվ և քննադատում էր «Մանգումեի էֆթյար» թերթի խմբագիր Կ. Փանոսյանին⁴:

Հայկական հարցին յուրահատուկ մոտեցում ցուցաբերեց Մ. Մամուրյանը: Ռուս-թուրքական պատերազմի շրջանում Մամուրյանը որոշ ակնկալիքներ ուներ Անգլիայից, հատկապես ցարիզմի ծավալապաշտ քաղաքականությանը հակադրվելու տեսակետից: Բեռլինի վեհաժողովից հիասթափված՝ Մամուրյանն արդեն նախընտրելի է համարում Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը, թեև նրան շարունակում էին ապակողմնորոշել Լոնդոնում գումարվող հայանպաստ հանրահավաքներն ու ժողովները⁵: Ավելի շատ քաղաքական միամտության ու դյուրահավատության, քան սթափ վերլուծումների արդյունք են Մ.

¹ Տե՛ս «Մշակ», 1876, № 23, № 25, № 27 և այլն: Տե՛ս նաև Լ և ո. Երկերի ժողովածու (տասը հատորով), հ. 6, Երևան, 1987, էջ 579-580:

² «Մշակ», 1878, № 165:

³ «Մշակ», 1879, № 126:

⁴ «Արձագանք», 1883, № 37, էջ 525: Տե՛ս Հ. Պարոնյանի Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1965, էջ 216-220, 222-230, 232-236, 251-254 և այլն:

⁵ «Արևելյան մամուլ», 1877, № 11, էջ 430-440, 1878, № 5, էջ 5-19, № 6, էջ 41-52, № 7, էջ 105-110, № 8, էջ 155-161 և այլն:

Չերազի երկու հանրահայտ գրքույկները⁶: Այսուհանդերձ, Բեռլինի վեհաժողովից Չերազն այն եզրակացությանն էր հանգում, թե հայերը նախ իրենք ապավինելու են իրենց և ոչ թե օտարին, սակայն շարունակում էր մնալ նույն պարզամիտ քաղաքագետը, երբ պնդում էր, թե «Բեռլինի վեհաժողովն հետո անհնար է թերահավատ լինիլ ազգային ապագային նկատմամբ»⁷: Չերազը միայնակ չէր իր տեսակետի մեջ և արտահայտում էր հայ մտավորականության մի որոշ մասի դեռևս պահպանված պատրանքները անգամ վեհաժողովից հետո: Շատ ավելի ուշ Չերազն իր անգլիական կողմնորոշումը փոխեց ռուսականով՝ պահպանելով, սակայն, իր միակողմանի մոտեցումները Հայկական հարցում⁸:

Հայկական հարցի միջազգայնացումը՝ հատկապես պայմանավորված 1894-1896 թթ. կոտորածների իրողությամբ, վերստին հետաքրքրություն առաջացրեց ռուսական և եվրոպական հետազոտողների շրջաններում: Դրա ուշագրավ արդյունքն էր Հայկական հարցին նվիրված հայտնի ռուսերեն ժողովածուն⁹: Այստեղ քննված են Հայկական հարցի միջազգայնացման նախադրյալները XIX դ., Օսմանյան Թուրքիայի բռնատիրական նկարագիրը պայմանավորող գործոնները, թուրք-եվրոպա-ռուսական հարաբերությունները, դրանց հակամարտ բնույթը, օսմանյան կառավարության թշնամական վերաբերմունքը հայերի հանդեպ, վերջիններիս անտանելի հարստահարությունները և այլն: Թուրքիայում թանգիմաթի բարենորոգումների, արևմտահայերի ազգային սահմանադրության նշանակության և ոչ արդյունավետության համոզիչ հիմնավորումն է տրված բելգիացի իրավաբան Մ. Ռոլեն-Տեկմենի ուսումնասիրության մեջ¹⁰: Այս հեղինակը Հայկական հարցի միջազգայնացման սկիզբն է համարում Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը, որով Թուրքիան Ռուսաստանի հանդեպ ստանձնում էր միջազգային պարտավորություն՝ Արևմտյան Հայաստանում իրականացնել անհրաժեշտ բարեկարգումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից: Նա նշում է նաև 16-րդ հոդվածի թերությունը միջազգային իրավունքի տեսակետից՝ լռելյայն շրջանցումն այն միջոցների, որոնցով Ռուսաստանը պետք է հսկեր նշված պարտավորությունների կատարումը:

Նույն ժողովածուում հանդես եկած Մ. Մակքոլը¹¹ նկատում է, որ Բեռլինի վեհաժողովի կոլեկտիվ՝ ուրեմն և չհասցեագրված պարտադրանքը տերություններին՝ վերահսկելու արևմտահայության կացության բարելավումը և այս մասին Թուրքիայից հաշվետվություն պահանջելը, սկիզբ է առնում դեռևս 1856 թ. Փարիզի դաշնագրից: Նա իրավացիորեն եզրակացնում է, որ «ընդհանուր

⁶ Մ. Չ եր ա զ. Թե ինչ շահեցանք Բեռլինի վեհաժողովեն, Կ. Պոլիս, 1878, ն ու լ յ ն ի՝ Հայաստան և Բտալիա, Կ. Պոլիս, 1879:

⁷ Մ. Չ եր ա զ. Հայաստան և Բտալիա, էջ 22:

⁸ Մ. Չ եր ա զ. Ազգային խնդիրներ, Փարիզ, 1927:

⁹ Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году. М., 1896.

¹⁰ М. Г. Р о л е н - Ж е к м е н. Армения, армяне и трактаты (Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, с. 1-128).

¹¹ М. М а к к о л ь. Ответственность Англии перед Арменией (Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, с. 131-211).

պարտավորվածությունը և ոչ մեկի պարտավորվածությունն էլ չէր»¹²: Հետևաբար, գրում է նա, վեհաժողովը չլուծեց 61-րդ հոդվածով նախատեսված՝ ոչ տերությունների և ոչ էլ Թուրքիայի պարտավորվածությունները արևմտահայության առջև: Մ. Մակքոլը Ման Ստեֆանոյի առավելությունը Բեռլինի վեհաժողովի նկատմամբ համարում է նրա նպատակի որոշակիությունը՝ ի դեմս պարտավորվածությունները վերահսկող իրական ուժի՝ Ռուսաստանի: Վերոհիշյալ ժողովածուում տպագրված՝ Ֆ. Գրինի աշխատության մեջ¹³ շեշտադրվում են տերությունների, հատկապես Անգլիայի եսասիրական նպատակները: Հայկական հարցում վեհաժողովի որոշումների անպտուղ բնույթը ցուցադրելու նպատակով նա անդրադառնում է Բ. Դոան 1880 թ. հունիսի 11-ին տերություններին հղած հավաքական հուշագրին՝ այն որակելով իբրև դիվանագիտական կատակերգություն: Թուրքական կառավարության հալածական վերաբերմունքը հայերի հանդեպ և տերությունների դիվանագիտական խարդավանքներն են բացահայտվում նույն գրքում զետեղված՝ Է. Դիլլոնի և Գ. Դինի աշխատություններում¹⁴:

Հայկական հարցի նկատմամբ տերությունների հանցավոր անտարբերությունն ըստ ամենայնի հանդես է բերված Ա. Չոպանյանի հրապարակումներում: Դրա հետևանքով, նկատում է նա, Թուրքիան հնարավորություն ստացավ բռնելու հայերին բնաջնջելու ուղին¹⁵:

Գր. Արծրունու ուղեգրի ձև է պաշտպանում Մ. Վարանդյանը, որը Հայկական հարցի ձախողումը Բեռլինի վեհաժողովում բացատրում է հայերի միակողմանի, զուտ դիվանագիտական լծակներին դիմելու հանգամանքով, որտեղ «արհամարհված էր ամենաեականը՝ նրա իրական, դիմադրական ուժը»¹⁶: Տրամագծորեն հակառակ դիրքորոշում ունի պահպանողական Ե. քահ. Գեղամյանցը, որը Հայկական հարցի հարուցումը համարում է ոչ միայն չարիք, այլև այնպիսի չարիք, որ դրսից էր պարտադրված հայերին: Հրահրողը, պնդում է նա, թուրքական պետությունն էր, որը հայերին ոտքի էր հանել սլավոններին թևաթափ անելու նպատակով¹⁷: Այս հեղինակը սխալվում է, երբ Հայկական հարցի առաջ քաշելը վերագրում է Բ. Դոանը: Անշուշտ, օսմանյան կառավարությունը ջանում էր օգուտ քաղել Կ. Պոլսի հայերի՝ սեփական հարցի արծարծումներից, բայց այդ դեռևս չէր նշանակում, որ պետք է անտեսել թուրքական լուծր թոթափելուն ուղղված հայության նպատակներն ու գործողությունները: Ճիշտ նույն

¹² Նույն տեղում, էջ 191-192:

¹³ Ф. Г р и н. Армянский кризис и владычество турок (Сасунская резня) (Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, с. 215, 234).

¹⁴ Э. Д и л л о н. Положение дел в Турецкой Армении (Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, с. 327-373). Гр. А. Д и е в. Армянский вопрос в Турции (*նույն տեղում*, էջ 377-443).

¹⁵ Ա. Չոպանյանի և Գ. Դինի. Ժամանակակից Հայաստանի առաքյալը. - «Անահիտ», 1907, № 1-2, էջ 1-14:

¹⁶ Մ. Վարանդյանի և Գ. Դինի. Հայկական շարժման նախապատմություն, հ. II, Ժնն, 1913:

¹⁷ Ե. Գեղամյանցի և Գ. Դինի. Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում կամ Հայկական հարցի հինգերորդ շրջանը, Բաքու, 1915:

կերպ Ե. Գեղամյանը սխալվում է՝ Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը զուտ «ռուսական հարց» համարելով և չտեսնելու տալով այն, որ Հայկական հարցի միջազգայնացումը սկսվում է հենց այդ հոդվածով, որի հետևանքով, եթե այն ի չիք չդարձվեր Բեռլինի վեհաժողովում, արևմտահայերը կստանային ապահովության և այլ բարեկարգումների իրական հնարավորություններ: Այս հեղինակի հայացքներն իրենց հետագա զարգացումն են գտել Լեոյի աշխատություններում¹⁸: Լեոն հախուռն բացասում է և՛ Սան Ստեֆանոյի, և՛ Բեռլինի վեհաժողովի համապատասխան հոդվածները, իսկ հետագայում ավելի է խորացնում Ե. Գեղամյանցի առաջ քաշած՝ Հայկական հարցը օտար թելադրանքի հետևանք լինելու մասին տեսակետը (Ֆրանսիա, ռուս սլավոնաֆիլներ): Հայկական հարցի հարուցումը նա որակում է իբրև «միամիտ և տհաս» խանդավառության արդյունք, դյուրահավատություն եվրոպական պետությունների և հասարակական կարծիքի նկատմամբ, ինչը դարձավ միլիոնավոր արևմտահայերի վերջնական բնաջնջման պատճառ: Արևմտահայերը, պնդում է նա, դարձան անզոր-թուրքական և ռուսական դիվանագիտության զոհը:

Իր վերջին գիրքը Լեոն գրել է Մեծ եղեռնից շուրջ երկու տասնամյակ անց, ուստի կարող էր եզրակացությունների հանգել Հայկական հարցի միջազգայնացման աղետալի հետևանքների մասին: Բայց այն, որ Լեոն առհասարակ օտար միջամտության արդյունք է համարում ազգային-ազատագրական պայքարը, հայության բողոքն ու ըմբոստացումը ի պաշտպանություն իր մարդկային տարրական իրավունքների, նրան բնութագրում է որպես ծայրահեղ պահպանողականի և պատմության տրամաբանությունը կամայականորեն մեկնաբանող պատմաբանի: Իսկ այդ տրամաբանությունը հասցրել էր այն բանին, հայերի կամքից անկախ պատճառներով, որ Արևելյան հարցի ամեն մի քաղաքական լուծում պետք է ուղղվեր իրենց դեմ:

Խնդրի այս կողմը հատկապես արժևորվել է ռուս հետազոտող Պ. Ա. Չիխաչովի հրապարակումներում¹⁹, որտեղ հստակ ցույց է տրվում, որ Արևելյան հարցի լուծումներին հակակշռել է Անգլիան, որն իր շահերից ելնելով ու պաշտպանելով «հիվանդ մարդուն», այդ մոտեցումը քողարկում էր, իբր, եվրոպական հավասարակշռությունը պահպանելու մտահոգությամբ: Անշուշտ, այս հեղինակը ջանում է մեղմել ցարիզմի նվաճողական քաղաքականության սուր ուղղվածությունը և այն գնահատելիս հանդես է բերում կողմնակալ մոտեցում, սակայն չի կարելի բարձր չգնահատել Արևելյան հարցում տերությունների և Թուրքիայի դիրքորոշումների վերաբերյալ նրա ուշագրավ մոտեցումները:

Օսմանյան կայսրության ճնշված ազգերի ազատագրման սկզբունքից ելնելով՝ Կ. Թումայանն ընդգծում է Ռուսաստանի քաղաքական «անշահախնդրությունը» և դրա դիմաց վաստակած հեղինակությունը այդ ազգերի մեջ: Նա

¹⁸ Լ. և Ն. Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, նո 1 յ և ի՝ Թյուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934:

¹⁹ П. А. Ч и х а ч е в. Письма о Турции. М., 1960; ն ու յ և ի՝ Великие державы и Восточный вопрос. М., 1970.

Ման Ստեֆանոն համարում է «ազգերի ազատության դաշնագիր», որով Հայաստանն ունեցավ միջազգային դաշինքի մեջ մտնելու պատիվը: Կ. Թումանյանն առաջին հայ հեղինակն է, որ միջազգային իրավունքի շրջանակներում է գնահատում Ման Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերը՝ նշելով, որ առաջինը արևմտահայության վիճակի բարելավման լուրջ երաշխիքներ էր տալիս Ռուսաստանի շնորհիվ, մինչդեռ Բեռլինի վեհաժողովը, Անգլիայի ճնշումներով, հայերին թողեց առանց որևէ պաշտպանության: Տերությունների կոլեկտիվ պարտավորվածությունը հայերի նկատմամբ նա համարում է անիրական խոստում, որը ոչինչ չտվեց հայերին: Ոչ քիչ կողմերով իր նշանակությունը պահպանած այս աշխատության թերությունը, թերևս, պետք է համարել Ռուսաստանի արտաքին քաղաքականությանը տված նրա հակասական գնահատականը²⁰:

Ընդհանուր առմամբ Հայկական հարցի միջազգայնացման ընթացքը սթափ վերլուծության է ենթարկված Ե. Թոփչյանի աշխատության մեջ²¹: Այստեղ այդ գործընթացը ներկայացվում է իբրև հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման, թանգիմաթի ձախողման, արևմտահայերի ազգային սահմանադրության ոչ արդյունավետության անխուսափելի արդյունք: Նա Ման Ստեֆանոն գերադասում է Բեռլինի վեհաժողովից, 61-րդ հոդվածը համարում է «դժբախտ» իրողություն, որը ոչնչացրեց 16-րդ հոդվածի իրացման երաշխիքները:

Իր վերլուծական բնույթով առանձնանում է Մարուխանի ուսումնասիրությունը²²: Նա Հայկական հարցի հարուցումը դիտարկում է լայն կտրվածքով, Բեռլին մեկնած պատվիրակության, ինչպես և Նուբար փաշայի ներկայացրած ծրագրերի համեմատական քննությամբ: Վեհաժողովում Հայկական հարցի ձախողման հիմնական գործոնը նա համարում է ռուս-եվրոպական անհաշտ մրցակցությունը: Այսուհանդերձ, ակնհայտորեն զգացվում է Մարուխանի համակրական վերաբերմունքը Անգլիայի նկատմամբ, վերջինիս եսապաշտ քաղաքականության անտեսումը: Անգլիան, իբր, հավատացել է «սուլթանի ուղղամտությանը» բարեկարգումներ իրականացնելու հարցում և միայն տարիներ հետո է համոզվել իր տեսակետի անհուսալիության մեջ: Անշուշտ, Մարուխանն ինքն է միամտություն ցուցաբերել անգլիական որոշ քաղաքագետների երեսպաշտական հայտարարությունների նկատմամբ (որպիսին, օրինակ, Արգայլի դուքսն էր), որի նպատակն էր Հայկական հարցի անհաջողության ողջ մեղքը Ռուսաստանի վրա դնելը:

²⁰ Կ. Թումանյան. Պատմություն Արևելյան խնդրո և առաջնորդ Հայկական հարցի, հ. Ա-Բ, Լոնդոն, 1905:

²¹ Ե. Թոփչյան. Երիտասարդ Թյուրքիան և հայերը, մասն 1, Թիֆլիս, 1909:

²² Մարուխան. Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թյուրքիայում (1860–1910), հ. Ա, Թիֆլիս, 1912:

Այսպիսով, բազմաթիվ հրապարակումներ, առանձին գրքեր ու ուսումնասիրություններ նոր կողմերով են լուսաբանում հիմնահարցը՝ թե՛ փաստերի և թե՛ պատմաքննական վերլուծումների տեսակետից²³:

Հայկական հարցի գնահատման ընդունված մոտեցումները պետք է կտրուկ խախտվեին խորհրդային պատմագիտության նոր, քաղաքականացված առաջադրումներով: Գաղափարախոսական մոտեցման ընդգծված առաջին արդյունքներից էր Բ. Բորյանի ռուսերեն հայտնի աշխատությունը՝ հազեցած բուրժուական գաղափարախոսությունն ու իմպերիալիզմը ժխտող մարքսիստական դրույթներով²⁴: Հեղինակը հայերի հարստահարությունների մեջ ամենից առաջ տեսնում է դրանց հիմքում ընկած դասակարգային բնույթը՝ փաստար-

²³ Տե՛ս Ա. Երիցյանի. Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայր ժԹ դարում, մ. 2, Թիֆլիս, 1895, Մ տ. Պ ա լ ա ս ա ն յ ա ն. Պատմություն հայոց. Սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1902, Է. Ա կ ն լ ի. Կովկասյան վերքեր, հ. 1, Ժնն, 1903, Կ. Ե զ յ ա ն յ ա ն. Էջմիածնի Մայր աթոռի և ռուսաց կառավարության հարաբերությունների ծագումը, Թիֆլիս, 1904, Մ. Գ ա բ թ ի լ յ ա ն. Հայկական ճգնաժամն և վերածնություն, Բոստոն, 1905, Բ. Բ շ յ ա ն յ ա ն. Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1907, ն լ յ ի՝ Թյուրքիայի ապագան (քննական էություն), Թիֆլիս, 1907, Մ. Մ ա պ ա հ - Գ յ լ յ ա ն. Երիտասարդ Թյուրքիա, Փարիզ, 1908, Լ. Խ ա ն - Ա զ ա տ. Հիշողություններ Խրիմյանի մասին, Թիֆլիս, 1908, Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն. Սահմանադրական Թյուրքիա (պատմական ակնարկ) («Ընդարձակ օրացոյց», Կ. Պոլիս, 1909), ն լ յ ի՝ Մինաս Չերազ. Բր կյանքը և գործը, Կահիրե, 1927, ն լ յ ի՝ Անհետացող դեմքեր. Գրիգոր Զոհրապ (իր կյանքը և իր գործը), Կ. Պոլիս, 1919, Մ. Վ ա բ ա ն յ ա ն. Բողոքը նորագույն պատմության մեջ, Ժնն, 1911, ն լ յ ի՝ Հայկական շարժման նախապատմություն, հ. II, Ժնն, 1913, ն լ յ ի՝ ՀՀ Դաշնակցության պատմություն, Երևան, 1992, Ա տ ո մ. Օսմանյան կայսրության անկման պատմությունը, Կ. Պոլիս, 1913, Է. Տ ո ի ն. Արևելյան խնդիրը և Հայկական հարցը իր ծագումեն մինչև մեր օրերը, Կ. Պոլիս, 1913, Հ. Ա ճ ա ո յ ա ն. Տաճկահայոց հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915 թ.), Նոր-Նախիջևան, 1915, Մ. Բ յ ո լ ա տ. Արևելյան խնդիր և Հայկական հարց, Կ. Պոլիս, 1919, Մ. Օ Ր մ ա ն յ ա ն. Ազգապատում, հ. Գ, Երուսաղեմ, 1927 և այլն: Հայկական հարցի միջազգայնացման, ինչպես նաև դրան ադերսվող՝ արևմտահայության սոցիալական ու իրավական կացության վերաբերյալ ստվարածավալ ռուսերեն գրականություն է ստեղծվել XIX դ. վերջերին և XX դ. առաջին տասնամյակներին: Դրանք մենագրություններ են, հրապարակումներ և այլն՝ Դ. Գ. Ր օ շ և ն. История Турции от победы реформы в 1826 году до Парижского трактата в 1856 году. Ч. II, СПб., 1872; Փ. Մ а р т е н с. Восточная война и Брюссельская конференция, 1874 – 1878 гг. СПб., 1879; Ս. Օ. К и ш м и ш և. Война в Турецкой Армении 1877–1878 гг. СПб., 1884; Ա. Մ. К о л օ б а к и ն. Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции. Т. 1, ч. 1, Тифлис, 1888; Մ. Մ а к - К о л օ. Султан и державы. СПб., 1897; Գ. Ր. Չ а л х у ш օ յ ա ն. Армянский вопрос и армянские погромы в России (панисламизм). Ростов н/Д., 1905; Ա. Վ. А м ф и т е а տ ռ օ. Армянский вопрос. СПб., 1906; Ա. Կ. Դ ж и в е л և օ. Армяне в России. М., 1906; Փ. Լ и с т. Международное право (под. ред. В. Э. Грабаря). Юрьев, 1909; Գ. Դ. М н а ц а к а ն я ն. Разрешение Армянского вопроса. М., 1914; Ա. Կ. Կ о в а. Старая Турция и младотурки. Год в Константинополе. Пг., 1916; Ի. Ն. А н а н օ. Судьба Армении. М., 1918; Կ. Վ. К л օ ч н и к օ, Ա. Ս а б а ն и ն. Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Ч. 1, М., 1925; Օ. Բ и с м а р к. Мысли и воспоминания. Т. II, М., 1940; Дневник Д. А. Милютин, 1876–1877, Т. II, М., 1949; Дневник Д. А. Милютин, 1878–1880, Т. III, М., 1950; Լ. Դ ж о р д ж. Правда о мирных договорах. Т. II, М., 1957; Փ. Ա. Р о т ш т е й н. Международные отношения в конце XIX в., М.–Л., 1960; Կ. Ա. В е с е л օ в с к и й. Трагедия Турецкой Армении. М. (6. г.).

²⁴ Բ. Ա. Բ օ բ ր օ յ ա ն. Армения. Международная дипломатия и СССР. Ч. I, М.–Л., 1928.

կելով արևմտահայ վերնախավի համագործակցությունը օսմանյան իշխող շրջանների հետ, սակայն այդպես էլ չբերելով թուրք և հայ աշխատավորության համերաշխության պրոլետարական դրույթը հաստատող որևէ օրինակ: Չափից դուրս թանձրացնելով գույները՝ Բ. Բորյանը նույնիսկ պնդում է, թե Թուրքիայում հայերին հալածելը, անգամ արստրն ու մահապատիժները «մշտապես իրենց՝ հայ կապիտալիստների գործն էր, որոնք Բ. Դոանն էին մատնում իրենց ազգակիցներին»²⁵: Այս հեղինակը ևս, դեռևս Լեռնից առաջ, բացասական վերաբերմունք ունի XIX դ. հայ ազատագրական շարժումների նկատմամբ՝ դրանք համարելով օտար կապիտալիստների թելադրանքի արդյունք (ինչպես, օրինակ՝ 1862 թ. Զեյթունի ապստամբությունը): Նա Օսմանյան Թուրքիան համարում է եվրոպական երկրների և Ռուսաստանի թալանչիական քաղաքականության գոհը, իսկ ազգային ինքնորոշման ձգտումները՝ ցարիզմի նվաճողական նպատակներին ծառայող գործոն: Բ. Բորյանն ամեն կերպ պաշտպանում է արյուն չթափելու պահպանողական մոտեցումը և սնանկ հռչակում ազատագրական պայքարի գաղափարը: Դրիմի պատերազմից հետո է նա համարում Հայկական հարցի՝ միջազգային վերածվելու սկիզբը՝ իբրև Արևելյան հարցի մի մասի: Բորյանն անգիտանում է, որ Փարիզի դաշնագրում, իբրև միջազգային իրավունքի օբյեկտ, Հայկական հարցը ամեննին չի հիշվում: Այսուհանդերձ, նա հակասում է իրեն, երբ մի այլ տեղ Բեռլինի վեհաժողովն է համարում Հայկական հարցի միջազգայնացման սկիզբը²⁶:

Խորհրդային պատմագիտությունը Հայկական հարցին անդրադարձավ հատկապես 1950-ական թվականների երկրորդ կեսից: Հիմնահարցին նվիրված Խ. Բադայանի աշխատության²⁷ մեջ նկատելի են նախորդ տասնամյակների «ազգայնական թեմաների» կապանքը, դեռևս չհաղթահարված մտայնության հետքերը: 16-րդ հոդվածին նա վերագրում է այն, ինչը չկա՝ Հայաստանին նահանգական ինքնավարություն տալը: Խ. Բադայանը Ռուսաստանը նույնացնում է ռուս ժողովրդի հետ (որից այդպես էլ չկարողացավ ձերբազատվել հետագա շրջանի խորհրդահայ պատմագիտությունը), նրանց անվերապահորեն հռչակում ազատարար՝ շրջանցելով ցարիզմի նվաճողական նպատակները և դրանք վերագրելով միայն Անգլիային ու եվրոպական մյուս բոլոր տերություններին: Միաժամանակ, Խ. Բադայանը նշում է 16-րդ և 61-րդ հոդվածների էական տարբերություններն ու Սան Ստեֆանոյի պայմանագիրը դիտում է որպես Հայկական հարցի միջազգայնացման սկիզբ:

Սան Ստեֆանոյում Հայկական հարցի միջազգայնացումը հայության նոր փորձությունների պատճառ է համարում Մ. Ներսիսյանը²⁸: Հայկական հարցը դիտելով Արևելյան հարցին սերտաձած՝ նա բացահայտում է տերությունների

²⁵ Նույն տեղում, էջ 188:

²⁶ Նույն տեղում, էջ 221 և 236-237:

²⁷ Խ. Բ ա դ ա յ ա ն. «Հայկական հարցը» Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում 1878 թ., Երևան, 1955:

²⁸ Մ. Ն եր ս ի ս յ ա ն. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850 – 1870 թթ., Երևան, 1955:

խոր հակասությունները, որ մեծ չափերի էին հասնում հատկապես Անգլիայի թուրքասիրական քաղաքականության հետևանքով: Այդ քաղաքականությունն էր պատճառը, որ ի չիք դարձրեց բարենորոգումների հնարավորությունը: Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածը, եզրակացնում է նա, կատարյալ չարիք դարձավ արևմտահայերի համար: Մ. Ներսիսյանը նա, ելնելով իր ժամանակի գաղափարախոսական թելադրանքներից, շրջանցել է Ռուսաստանի նվաճողական քաղաքականության գործոնը ռուս-թուրքական և ռուս-անգլիական հարաբերություններում: Այս մտայնությունը՝ անքննադատ մոտեցումը ցարիզմի արևելյան քաղաքականությանը (և առհասարակ) շատ ավելի անսքող ու իբրև հայեցակարգ է դրսևորվել Վ. Խվոստովի հիմնարար վերլուծություններով առանձնացող աշխատության մեջ²⁹: Վերստին շրջանառության մեջ դնելով Ռուսաստանի «ազատարար առաքելության» վերաբերյալ սլավոնաֆիլական ձևակերպումը՝ նա պնդում է, որ ի դեմս սլավոնների, ռուսական կառավարությունը դաշնակիցների էր տեսնում՝ ընդդեմ Օսմանյան Թուրքիայի և Ավստրո-Հունգարիայի: Միևնույն ժամանակ, այս աշխատությունն աչքի է ընկնում փաստական հազեցվածությամբ և գիտական լուրջ ընդհանրացումներով: Հանրագումարի բերելով վեհաժողովի արդյունքները՝ Վ. Խվոստովը իրավացիորեն եզրակացնում է. «Հայ ժողովրդի այն մասը, որին ռուսական զորքերն ազատագրեցին թուրքական տիրապետությունից, դրա շնորհիվ փրկվեց զանգվածային ֆիզիկական բնաջնջումից, որին հետագայում ենթարկվեցին Թուրքիայի սահմաններում մնացած հայերը»³⁰:

Սան Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերում Հայկական հարցը Արևելյան հարցի համատեքստում և առանձին խոր վերլուծության է ենթարկել Ռ. Հովհաննիսյանը³¹՝ հետստալինյան շրջանի առաջին հայ պատմաբանը, որ բացահայտեց ոչ միայն եվրոպական տերությունների, այլև Ռուսաստանի ծավալապաշտական քաղաքականությունը Բալկաններում ու Արևմտյան Հայաստանում: Նշելով արևմտահայության ռուսական կողմնորոշման ճշմարտացիությունը՝ Ռ. Հովհաննիսյանը, միաժամանակ, հերքում է ցարիզմի քաղաքականությունը բացառապես նվաճողական, ինչպես և անվերապահորեն դրական համարող տեսակետները: 61-րդ հոդվածը նա գնահատում է իբրև եղեռնը նախապատրաստող չարիք, արևմտահայության ծրագրված ոչնչացման խթան: Մյուս կողմից, հիմնահարցը դիտարկելով իր ողջ հակասականության մեջ՝ պատմաբանը եզրակացնում է նաև, որ Հայկական հարցի արծարծումը խթանեց հայության մեջ ազատագրական շարժման վերելքը:

Հայկական հարցը միջազգային դիվանագիտության և իրավունքի համակցության մեջ է քննել Ա. Եսայանը՝ խորհրդային հետազոտությունների շար-

²⁹ История дипломатии (автор тома Хвостов В. М.). Т. II, М., 1963.

³⁰ Նույն տեղում, էջ 133:

³¹ Ռ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (XIX դ. 70-80-ական թթ.), Երևան, 1965, ն ու յ ն ի՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցը, Ազգային-ազատագրական շարժումները 1870-1880-ական թվականներին աշխատությունները. - Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 97-127, 128-162:

քում իր տեսակի մեջ եզակի աշխատությամբ³²: Ա. Եսայանը հստակ սահմանում է Հայկական հարցի իրավական բովանդակությունը, տեղն ու նշանակությունը միջազգային քաղաքականության ոլորտում: Սան Ստեֆանոյում անգլո-թուրքական դիվանագիտական զաղտնի զսպանակների և ռուսական քաղաքականության խնդիրների բացահայտումով Ա. Եսայանը ցույց է տալիս Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի՝ աճուրդի վերածվելը միջազգային իրավունքի «կոլեկտիվ խնամակալության» դրույթով:

Հայկական հարցը ազատագրական պայքարի ուղղվածությամբ է իմաստավորում Ե. Սարգսյանը³³: Հայկական հարցը նա դիտում է որպես հայության հանդեպ Օսմանյան Թուրքիայում բռնությունների, ազգային-քաղաքական ճնշումների և տնտեսական կեղեքումների դեմ ուղղված պայքարի անխուսափելի հետևանք: Միաժամանակ, այս դրույթն ուղղվում է թուրքական պատմագիտության այն պնդումների դեմ, թե իբր Հայկական հարցն արհեստականորեն ստեղծել են Անգլիան և Ռուսաստանը՝ իրենց նվաճողական նպատակներն արդարացնելու համար: Ե. Սարգսյանն առաջիններից մեկն է հայ հեղինակների մեջ, որ մերկացնում է թուրքական պետական գործիչների և պաշտոնական պատմագիտության նենգափոխումները հայ-թուրքական հարաբերությունների պատմության ասպարեզում: Սան Ստեֆանոյում և Բեռլինում միջազգայնացված Հայկական հարցը դիտարկում է տերությունների, հատկապես անգլո-ռուսական սուր հակասությունների համատեքստում և դրանից էլ հիմնականում բխեցնում է այդ հարցի ձախողումը:

Ամբողջովին Սան Ստեֆանոյի ու Բեռլինի վեհաժողովի դիվանագիտական ու քաղաքական նշանակությանն է նվիրված ռուս խորհրդային հետազոտող Ն. Կինյայինայի աշխատությունը³⁴: Նա, սակայն, Կիպրոսի դաշնագիրը, փաստորեն, համարում է Անգլիայի բացարձակ քաղաքական հաղթանակը մյուս

³² Ա. Ե ս ա յ ա ն. «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965:

³³ Ե. Կ. Տ ա ր կ յ ա ն. Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв. Ереван, 1972.

³⁴ Н. С. К и н я п и н а. Внешняя политика России второй половины XIX в. М., 1974; ն ու լ յ ի ՚ Внешняя политика России первой половины XIX в. М., 1963. Սույն թեմային առնչվող ռուս խորհրդային հեղինակների կամ ռուսերեն հրատարակված աշխատություններից տե՛ս Մ. Ուրոսկոյի. Дипломатия и войны царской России в XIX столетии (сб. статей). М., 1923; В. С т а м б у л о в. Намык Кемаль. М., 1935; А. Д е б и д у р. Дипломатическая история Европы. Т. II, М., 1947; А. Ф. М и л л е р. Мустафа паша Байрактар. М.–Л., 1947; ն ու լ յ ի ՚ Турция. М., 1983. Ю. А. П е т р о с я н. “Новые османы” и борьба за конституцию 1876 г. в Турции. М., 1958; ն ու լ յ ի ՚ Младотурецкое движение (вторая половина XIX – нач. XX века). М., 1971; ն ու լ յ ի ՚ Турецкая публицистика эпохи реформ в Османской империи (конец XVIII – нач. XX вв.) М., 1985; А. С. Е р у с а л и м с к и й. Бисмарк. Дипломатия и милитаризм. М., 1968; Յ. Վ. Մ е г р е - л и д з е. Вопросы Закавказья в истории русско-турецкой войны 1877–1878 гг. Тбилиси, 1969; А. Д. Н о в и ч е в. История Турции, III, Новое время. Ч. 2 (1839 – 1853), Л., 1973; ն ու լ յ ի ՚ История Турции, IV, Новое время. Ч. 3 (1853–1875), Л., 1978; И. Е. Ф а д е е в а. Мидхат-паша: жизнь и деятельность, М., 1977; И. Л. Ф а д е е в а. Официальные доктрины в идеологии и политике Османской империи (XIX – нач. XX в.) (османизм-панисламизм). М., 1985; ն ու լ յ ի ՚ Османская империя и англо-турецкие отношения в середине XIX в. М., 1982.

բոլոր տերությունների նկատմամբ, որով և սուվերի տակ է թողնում վերջիններիս ազրեսիվ քաղաքականության շոշափելի արդյունքները Բեռլինի վեհաժողովում: Միաժամանակ, չի կարելի չհամաձայնել այս հեղինակի այն եզրակացությանը, որ հակառակ Սան Ստեֆանոյի, Բեռլինի դաշնագիրն առաջարկեց Արևելյան հարցի այնպիսի լուծում, որը հղի էր նոր պատերազմի սպառնալիքով:

Գնահատելով Սան Ստեֆանոյի դաշնագրի նշանակությունը՝ Հայկական հարցի միջազգայնացումն ամրագրելու տեսակետից՝ Ս. Ստեֆանյանը իր աշխատության մեջ նշում է բարենորոգումների իրացման գործում Ռուսաստանի վերահսկողության կարևորությունը՝ ցույց տալով, որ 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական և մյուս կողմից՝ 1878 թ. հունիսի 4-ի անգլո-թուրքական պայմանագրերը, Ավստրո-Հունգարիայի բացահայտ հակառուսական ու Գերմանիայի երկդիմի դիրքորոշումը միջազգային հարաբերություններում ոչ թե որևէ օգուտ տվեցին հայերին, այլ Հայկական հարցը դարձրեցին ընդամենը հարմար առիթ՝ միջամտելու Թուրքիայի ներքին գործերին³⁵: Ս. Ստեֆանյանը ևս վերհանում է այն իրողությունը, որ տերությունների կոլեկտիվ պարտավորվածությունը, որ նրանք ստանձնեցին Արևմտյան Հայաստանում անցկացվելիք բարենորոգումները վերահսկելու գործում, փաստորեն, դուրս մնաց նրանց անհատական շահագրգռություններից, որով և Հայկական հարցը դատապարտվեց մոռացության ու ձախողման:

Ծ. Աղայանն իր մենագրության մեջ ռուս-թուրքական հարաբերություններին և Սան Ստեֆանոյի դաշնագրին Անգլիայի հետագա միջամտությունը (մայիսի 30-ի անգլո-ռուսական համաձայնագիրը) որակում է իբրև նախապատրաստություն, որը պետք է կանխորոշեր Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի անհաջողությունը³⁶: Դժվար է, սակայն, համաձայնել Ծ. Աղայանի այն տեսակետին, թե իբր պոլսահայ մտավորականության մի մասը հույսեր էր կապում 1876 թ. օսմանյան սահմանադրության հետ: Թուրք սահմանադրականներն աչքի էին ընկնում իրենց ծայրահեղ ազգայնամոլությամբ և հպատակ ազգերի ձուլման սևեռուն գաղափարներով, որ նրանցից վանում էին ոչ միայն հայ, այլև ոչ թուրք մյուս ազգություններին:

Հայկական հարցի միջազգայնացման խնդրի հստակ բնութագրումներով ու հմտալի վերլուծությամբ առանձնանում է Ջ. Կիրակոսյանի աշխատությունը³⁷: Այստեղ տրվում է օսմանյան բարենորոգչական մտայնության ծայրահեղ ազգայնական բնույթի գնահատականը, որ անմիջապես կապվում է կայսրության հպատակ ժողովուրդների իրավական ու տնտեսական կացությունը գեթ դույզն-ինչ բարելավելու Թուրքիայի քաղաքական անկարողության հետ: Այստեղից Ջ. Կիրակոսյանի այն կարևոր եզրակացությունը, որ Հայկական հարցը

³⁵ С. С. Степанян. Армения в политике империалистической Германии (конец XIX – начало XX века). Ереван, 1975.

³⁶ Ծ. Աղայան. Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976:

³⁷ Д. ж. С. Киракосян. Буржуазная дипломатия и Армения (70-е годы XIX века). Ереван, 1981.

հայության՝ օբյեկտիվորեն պայմանավորված շարժման առաջադրումն էր, նրա ինքնորոշման ձգտումների անխուսափելի դրսևորումը և ոչ թե թելադրանք դրսից, ինչը երեսպաշտորեն պնդում են թուրք պատմաբանները: Չ. Կիրակոսյանը Սան Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերն է համարում Հայկական հարցի միջազգայնացման սկիզբը՝ դրա հետևանքների մեջ ոչ մի դրական բան չտեսնելով: Այս հեղինակը, միաժամանակ, ցույց է տվել անգլիական քաղաքականության կործանարար դերը և՛ մեկ, և՛ մյուս դեպքում հայերին ապակողմնորոշելու գործընթացում:

Մեզ հետաքրքրող հիմնահարցի վերաբերյալ ոչ այնքան հստակ դիրքերից Հայկական հարցի միջազգայնացման սկիզբը Լ. Բայրամյանը համարում է ինչպես Սան Ստեֆանոյի, այնպես էլ Բեռլինի վեհաժողովի համապատասխան հողվածները³⁸: Լ. Բայրամյանի աշխատությունն աչքի է ընկնում Հայկական հարցում անգլիական դիվանագիտական նրբացած խարդավանքների դիպուկ բացահայտումներով, որոնք առանձնապես նկատելի են դառնում այդ երկրի քաղաքականության ընդհանուր հենքի վրա:

XIX – XX դդ. Հայկական հարցի ժամանակակից գնահատումների, ինչպես և այդ հարցի հայ պատմագրության ընդհանրական բնութագիրն է տրված Ն. Մարուխանյանի աշխատություններում³⁹: Այս հեղինակը ամփոփել է հատկապես Հայկական հարցին տրված գնահատականները մինչխորհրդային հայ հասարակական մտքի և պատմագրության մեջ: Սակայն պակաս արժեքավոր չեն նրա վերլուծումները XX դ. վերջին տասնամյակների՝ խնդրո առարկա պատմագիտության նվաճումների և թերությունների վերհանման խնդրում, որով հեղինակը սեփական հիմնավորված տեսակետն է ներկայացնում Հայկական հարցի ծագման ու նրա զարգացման ընթացքի, հայերի զանգվածային ոչնչացման թուրքական պետական քաղաքականության հիմքերի, մեծ տերությունների քաղաքականության վայրիվերումների վերաբերյալ:

Հայկական հարցի միջազգայնացման նախադրյալների և միջազգային իրավունքի օբյեկտի վերածվելու քաղաքագիտական հմտալի քննություն է առկա Վ. Թունյանի աշխատություններում⁴⁰: Հեղինակը համամիտ է Ռուսաստանի ազատագրական առաքելության հայեցակետին, որի շուրջ բացահայտում է եվրոպական տերությունների մեծ և փոքր շահախնդրությունները Հայկական հարցը միջազգային աճուրդի հանման ասպարեզում: Դրա հետևանքով Բեռլինի վեհաժողովը նա համարում է «սլավոնական հաղթահանդեսի և Ռուսաս-

³⁸ Լ. Բայրամյան. Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում (XIX դարի վերջին քառորդում), Երևան, 1982:

³⁹ Ն. Մարուխանյան. Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, 1997, նույնի՝ Ս. Երիցյանը Հայկական հարցի մասին. – ՊԲՀ, 1998, № 3, էջ 41-46, նույնի՝ Հայ-ռուսական հարաբերությունների, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության լուսաբանումը “Արմյանսկի օրաթի” և “Արմյանե և օրաթի” պարբերականներում. – ՊԲՀ, 1999, № 1, էջ 110-122, նույնի՝ Հայկական հարցը, արևմտահայ ազատագրական միտքը և Մաղաքիա Օրմանյանը. – ՊԲՀ, 2006, № 1, էջ 50-71:

⁴⁰ В. Г. Туняна. Россия и Армения, 1878 – 1897. Ереван, 1997; նույնի՝ Россия и Армянский вопрос. Ереван, 1998.

տանի ազատագրական առաքելության» չափերի նվազեցում՝ համեմատած Ման Ստեֆանոյի հետ: Վ. Թունյանն իրավացիորեն նկատում է, որ արևմտահայ մտավորականության մի մասը կողմնակից էր անգլիական հովանու ներքո ինքնավարությանը, որով և վերհանում է կողմնորոշումների ոչ միատարր բնույթը հայ իրականության մեջ:

Արևմտահայության կացության, նրա տնտեսական և իրավական բռնադատված վիճակի ու Հայկական հարցի միջազգայնացման հասարակական-քաղաքական պայմաններին, ինչպես և օսմանյան լիբերալ շարժմանը առնչվող հիմնահարցերը քննարկվել են նաև խորհրդային այլ հեղինակների աշխատություններում⁴¹:

Հայկական հարցի միջազգայնացման պատճառները, գործընթացը և հետևանքները բավական լայն, ուշագրավ քննարկումների են արժանացել նաև սփյուռքահայ պատմագիտության մեջ: Այստեղ հիմնական շեշտերը դրվում են միջազգային դիվանագիտության և հատկապես Անգլիայի նվաճողական քաղաքականության բացահայտման ուղղությամբ: Դրա կողքին նկատելի է նաև Ռուսաստանի՝ համապատասխան օգտին Հայաստանի շահերը զոհաբերելու քաղաքականության առանձնացումը, որ զգալի է մասնավորապես Ա. Ալպոյաձյանի, Խ. Գաբիկյանի, Կ. Իզմիրլյանի, Շ. Թորիկյանի, Լ. Չորմիսյանի և այլոց աշխատություններում⁴²: Դրանցում, որպես ընդհանրական եզրակացություն,

⁴¹ Տե՛ս Ա. Հ ա մ բ ա թ յ ա ն. Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856–1914), Երևան, 1965: Վ. Պ ա թ ա մ յ ա ն. Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958, ն ու յ ն ի՝ Հայկական հարցի զարգացման պատմական ուղիները մինչև Բեռլինի կոնգրեսը.– ՀՄՄԹ ԳԱ «Տեղեկագիր», 1946, № 11-12, էջ 47-72, ն ու յ ն ի՝ Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, Երևան, 1978: Մ. Մ ա թ կ ո ս յ ա ն. Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին, Երևան, 1968, Հ. Վ ա թ դ ա ն յ ա ն. Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները XIX դ. վերջին քառորդում, Երևան, 1967, Հ. Պ ո ղ ո ս յ ա ն. Զեյթունի պատմությունը 1409-1921 թթ., Երևան, 1969, Լ. Խ ու լ ը ու ղ յ ա ն. Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Երևան, 1977, Ք. Տ ա ֆ Ր ա ս տ յ ա ն. Доктрина османизма в политической жизни Османской империи (50–70-е гг. XIXв.). Ереван, 1985; նույնի՝ Armenians and Turks: Contacts in History from Seldjukides Times up to the End and of the 19th Century.– Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, IV, Երևան, 2006, Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն. Երզրում.– Երզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դ. առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 1994, Մ. Ա թ զ ու մ ա ն յ ա ն. Դարավոր գոյամարտ, Երևան, 1989, Է. Կ ո ս տ ա ն դ յ ա ն. Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, Գ. Գ ա լ ո յ ա ն. Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առձակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, 2004:

⁴² Հ. Ա ճ է մ յ ա ն. Հայոց Հայրիկ, հ. 1, Թավրիզ, 1929, Հ. Ա դ ր ա շ յ ա ն. Հայկական հարցը երեկ և այսօր, Կահիրե, 1946, Խ. Գ ա թ ի կ յ ա ն. Հայկական հարցը Արևելյան հարցի մեջ (1860–1880), Բեյրութ, 1962, Կ. Բ զ մ ի թ լ յ ա ն. Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկայիս (քննական տեսություն), Բեյրութ, 1964, Լ. Չ ո թ մ ի ս յ ա ն. Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, 1850–1870, հ. Ա, Բեյրութ, 1972, Ա. Չ ո ս յ ա ն յ ա ն. Հայ ազգը «մեղավոր» չէ, Փարիզ, 1926, Գ. Գ յ ու զ ա լ յ ա ն. Խրիմյան Հայրիկ, Բեյրութ, 1954, Մ. Ս ե թ ո թ յ ա ն. Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937, նույնի՝ Մեր պայքարը ազատագրության ուղիով, Կահիրե, 1948, Ա. Գ յ ու լ ի ս ա ն դ ա ն յ ա ն. Ազգային շարժումների դրդապատճառները ԺԹ դարում, Փարիզ, 1939, Գ. Գ ա լ ու ս տ յ ա ն. Մարաշ կամ Գերմանիկ

ընդգծվում են Հայկական հարցի միջազգայնացման չարադետ հետևանքները Հայաստանի և հայերի համար:

Հայկական հարցին ծրագրված ու պաշտոնական գաղափարական սխեմաներով է մոտենում ոչ վաղ անցյալի և արդի թուրք պատմաբանների բացարձակ մեծամասնությունը: Հայկական հարցը նրանք համարում են արհեստական, Ռուսաստանի և եվրոպական տերությունների հրահրած հարց, որը բացառապես ծառայելու էր Օսմանյան Թուրքիայի ներքին գործերին միջամտելու նպատակին: Թուրքական պատմագիտությունը հիմնովին ժխտում է հայության իրավագուրկ և կեղեքված վիճակը Օսմանյան Թուրքիայում, հայերի ազատագրական շարժումը համարում օտար միջամտության արդյունք, հայերին՝ «անհավատարիմ ազգ», որն իբր դավաճանել է «օսմանյան հայրենիքին»: Նրանք ջնջում են հայերի ազգային ինքնորոշման իրավունքը՝ փոխարենը ճգնելով հիմնավորել Թուրքիայում նրանց տրված ազգային-քաղաքական կարծեցյալ իրավունքները և դրանք ապահովող օսմանյան երևութական երաշխիքները: Թանգիմաթի սոսկ մեռած տառ մնացած խոստումները նրանք վերածում են իրականության և, հիմն ի վեր կեղծելով պատմությունը, XIX դ. երկրորդ կեսի Օսմանյան Թուրքիան ներկայացնում են իբրև տնտեսական, քաղաքական ու իրավական առաջադիմություն ապրած մեծ տերություն, որ դարձավ միջազգային քաղաքականության խարդավանքների գոհր Ման Ստեֆանյում և Բեռլինի վեհաժողովում, իսկ Հայկական հարցը՝ այդ քաղաքականության գործիքը: Ընդամին, թուրքական կեղծարարները փորձառու և հույժ դյուրաբեկ գրչով օգտագործում են հայ, ռուս ու արևմտյան հետազոտողների թույլ տված երկիմաստ և ոչ հստակ ձևակերպումները, մեկնաբանություններն ու տվյալները, առավել հեշտությամբ՝ ակնհայտ սխալները՝ հարմարեցնելով դրանք իրենց շինծու դրույթներին և եզրահանգումներին: Ակնհայտ է, որ այս ամենն արվում է նախապատրաստելու մեկ այլ, ավելի հրեշավոր կեղծիքի ու ստի՝ հայերի ցեղասպանությունը հերքող գաղափարի հիմնավորման նպատակով: Թուրքական պատմագիտությունը, չնչին բացառություններով, ոզի ի բոլին ձգտում է աշխարհին ներկայանալ պատմության կեղծարարի համառ հետևողականությամբ, որը, սակայն, դատելով իր տված զգալի ճեղքերից, ապագա չունի: Իսկ ճեղքերը, հիրավի, ակնառու են: Ամբողջովին միտումնավոր բնույթ ունի Բիլյալ Շիմշիրի հրատարակած փաստաթղթերի ժողովածուն, որտեղ կազմողը ձգնում է հերքել հայերի ամեն մի հարստահարություն և բռնություն Օսմանյան Թուրքիայում: Նույն բնույթն ունի Յուսուֆ Հալաջօղլուի՝ առհասարակ հայկական կոտորածները և ցեղասպանությունը ժխտելու ծավալուն փորձը⁴³:

և հերոս Զեյթուն, Նյու Յորք, 1934, Գ. Լ. ա զ յ ա ն. Հայաստան և Հայ դատը ըստ դաշնագրերու, Կահիրե, 1942, նույնի՝ Հայաստան և Հայ դատը և ռուս հարաբերություններու լույսին տակ, Կահիրե, 1957, Գ. Ա հ ա ղ ա յ ա ն. Մեծ երազի ճամբուն վրա... (Ակնարկ Հայկական հարցի պատմության վրա), Լոս Անձելես, 1986, Շ. Թ ո ղ ի յ ա ն. Հայկական հարցը և միջազգային օրենքը, Բեյրութ, 1976:

⁴³ *Sté u Documents Diplomatiques Ottomans: Affaires Arméniennes* (ed. by Bilâl Şimşir), vol. 1 (1886-1893). Ankara, 1985. Y u s u f H a l a ç o ğ l u. Ermeni tehciri (4 baskı). İstanbul, 2004. T a n e r A k ç a m. Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu. İstanbul, 1993. S. K o ç a ş. Tarih Boyunca. Ermeniler

Խնդրո առարկա թեմայով բավական պատկառելի գրականություն են ստեղծել եվրոպական հետազոտողները: Ք. Ուոքերի, Ղ.Մ. Լանգի, Լ. Քինրոսի և այլոց աշխատություններում հանգամանորեն քննարկվում է Սան Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերի նշանակությունը Հայկական հարցի միջազգայնացման, Թուրքիայում ռուս-անգլիական հակամարտության, Հայկական հարցն այդ հակամարտության գալարներում արժեքրկվելու և դրանց ադերսվոդ հիմնահարցերի վերաբերյալ⁴⁴: Այս աշխատություններում վերհանվում է Անգլիայի հատուկ պատասխանատվությունը Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու և հանցավոր դիրքորոշումը դրանք Թուրքիայի կողմից վիժեցնելու գործում: Հայկական հարցին հասցված անկասելի հարված է դիտվում հատկապես Կիպրոսի համաձայնագիրը, որի արդյունքը պետք է լիներ 61-րդ հոդվածը և հայերին զրկելը անվտանգության բոլոր երաշխիքներից: Արևմտյան պատմաբանները հաճախ ուշադրություն են դարձնում մեծ քաղաքականությանը և դիվանագիտությանը հատուկ անբարոյական մեթոդներին ու գործելակերպին, որպիսիք, իրենց հերթին, նպաստեցին շահարկելու հայերի դյուրահավատությունը և Հայկական հարցը փակուղի մտցնելուն: Անկախ այն իրողությունից, որ վերոհիշյալ եվրոպական պատմաբանները երբեմն հակվում են մեղմացնելու իրենց երկրների ոչ բարենպաստ կամ թշնամական կեցվածքը Հայկական հարցի նկատմամբ, նրանց աշխատությունները հիմնականում ունեն անկողմնակալ բնույթ: Հայկական հարցի միջազգայնացման վերաբերյալ օտար հեղինակների ուսումնասիրությունները բավականաչափ խորությամբ լուսաբանվել են հայրենական պատմագիտության մեջ⁴⁵:

Այսպիսով, Հայկական հարցի միջազգայնացումը, սկիզբ առնելով XIX դ. 70-ական թվականներից՝ կապված Օսմանյան Թուրքիայում արևմտահայության բռնադատված կացության, նրա ազգային ինքնորոշման ձգտումների և միջազգային քաղաքականության զարգացումների հետ, խոշոր տեղաշարժեր առաջացրեց հայ հասարակական-քաղաքական մտքի մեջ: Հայկական հարցի միջազգայնացման խնդրի շուրջ ստեղծված գրականությունը ներառում է հայ հասարակական մտքի մոտեցումներ, ստվարածավալ փաստագրական հրապարակումներ, վավերագրեր, տարբեր լեզուներով հրատարակված բազմաթիվ պատմական ուսումնասիրություններ, որոնք նպաստում են խնդրո առարկա հարցի բազմակողմանի լուսաբանմանը: Վերջինս, իր հերթին խթան է հայերի ցեղասպանության ճանաչման հիմնահարցի համար, որն ունի արդիական կարևոր նշանակություն:

ve Türk – Ermeni ilişkileri. Ankara, 1967. E. Z. K a r a l. Armenian Question (1878 – 1923). Ankara, 1975. B. N. Ş i m ş i r. The Genesis of the Armenian Question. Ankara, 1983 (Turkish Historical Society, ser. VII, № 84). B. N. Ş i m ş i r. İngiliz Belgelerinde Osmanlı Ermenileri, 1856-1880. Ankara, 1986. K a m u r a n G ü r ü n. Ermeni Dosyası. Ankara, 1988. E s a t U r a s. The Armenians in History and the Armenian Question. Istanbul, 1988. M e h m e d H o c a o ğ l u. Arşiv vesikalariyla Tarihte Ermeni Mezâlimi ve Ermeniler. Ankara, Istanbul, 1976. H ü s e y i n N â z i m P a ş a. Ermeni Olayları Tarihi, kıs. 1-LV, kıs. 2-VIII. Ankara, 1994. T ü r k ö z u K e m a l H a l i l. Osmanlı ve Sovyet Belgeleriyle Ermeni Mezâlimi. Ankara, 1982, XII.

⁴⁴ S t é u C h. J. W a l k e r. Visions of Ararat. London–New York, 1977; *ն ռ լ յ ն ի՝ Armenia. The Survival of a Nation.* London, 1980; D. M. L a n g. Armenia: Cradle of Civilization. London, 1970. Л. К и н р о с с. Расцвет и упадок Османской империи. М., 1996.

⁴⁵ S t é u Ե. *Մ ա ր գ ա յ ա ն, Բ. Մ ա հ ա կ յ ա ն. Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, Новая история Армении в трудах современных зарубежных авторов. Ереван, 1993; Մ. Ն ե ր ա ի ս յ ա ն. Պատմության կեղծարարները (հոդվածներ և հաղորդումներ), Երևան, 1998:*

ПРОБЛЕМА ИНТЕРНАЛИЗАЦИИ АРМЯНСКОГО
ВОПРОСА В ОБЩЕСТВЕННОЙ МЫСЛИ И ИСТОРИОГРАФИИ*ГЕВОРК АРУТЮНЯН*

Р е з ю м е

Проблема интернализации Армянского вопроса тесно связана с насущными национальными вопросами армянского народа, в силу чего история ее изучения особенно актуальна для арменоведения. Причины интернализации Армянского вопроса, отношение великих держав к Османской Турции, внешнеполитическая ориентация армян неоднократно рассматривались в исторических исследованиях. Исходя из идеологического диктата, советская историография, за редкими исключениями, рассматривала интернализацию Армянского вопроса либо в качестве второстепенного звена Восточного вопроса, либо в отрыве от проводимой османскими властями политики. Широкое обсуждение рассматриваемой проблемы способствует ее правдивой и объективной оценке.

THE ISSUE OF THE INTERNALIZATION OF THE ARMENIAN
QUESTION IN THE SOCIAL THOUGHT AND HISTORIOGRAPHY*GEVORG HARUTYUNYAN*

S u m m a r y

The issue of the internalization of the Armenian question is tightly connected with the current national issues of Armenian people. So, this study is very vital for the complex of Armenian studies. The reasons of the internalization of the Armenian question, the position of great powerful countries regarding Ottoman Turkey, external political orientation of Armenians were thoroughly observed in various historic researches. The Soviet historiography (here we must take into consideration the ideological conditions), with only some exceptions, used to observe the internalization of the Armenian question either as an issue in the context of Eastern question, or a separate issue of the policy, realized by Ottoman politicians. The thorough discussion of the problem supports greatly to discover the true sides and purposes of this task.